


այն էլ պատահում: Այդ հատորը գրում է խրատերէն. Մի էջում պարունակում է Փրկչի աղօթքը և խօսակցութիւնը աշակերտների հետ: Այդ հատումում պատմում է ըստ երևութիւն Քրիստոսի Վեթիւնմանի պարտիզում աղօթելը նման Մատթէոս, Մարկոս և Ղուկաս աւետարանիչների պատմածին: Պատմադն ախանաւես մարգ է: և սրովհետեւ Վեթիւնմանի պարտիզում Յիսուսի հետ եղել են միայն Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս առաքեալները, ուստի ենթադրում են որ այդ աւետարանը կարող է պատկանել առաջին երկու առաքեալներից մէկն ու մէկին:



ՄԵՐ ԳԵՐՈՒ ՄԵՆԵՆԱՅՏՏԱՐԱՆԻ ԳՆՈՒԹԵՂԱՐԹՈՒԹՅՆԸ.

ՀԱՆՍ ԿՈՐԶԻԷՐԴ

H. Kaarsberg

(Politiken—մայիսի 25, 27, 29 և յունիսի 1, կամ № № 145, 147, 149 և 142).

Մի անգամ Տուրքիան ասել է. «Ես սիրահար եմ Եւրոպայի, կամ աւելի ճիշդ է ասել, եւրոպական գաղութարարութեան, որ այսօր մեզանում (Ռուսաստանում) կատակի և հեղուկեան նիւթ է համարվում: Ես պաշտօղ եմ քաղաքակրթութեան,—այո՛, այս բառն աւելի լաւ է: Քաղաքակրթութիւնը հասկանալի դադարաւոր է, մարդը և սուրբ է, իսկ միւս բոլոր ձայները, զոր օր, աղգութիւն, փառք, մեծութիւն» բռնում են արեան հոտ ...»

Երբէք չեմ մոռանայ 83-ի մի գեղեցիկ աշնան առաւօտ Բուդա—Պեշտում: Մեծ իրարանցում կար փողոցներում, լրագրիւնները ձեռքէձեռք էին անցնում, ամէն կողմից լալում էր, թէ «Եւրոպան» մեծ կորուստ է կրել, թէ Իւան Տուրքիները մեռել է, թէ միակ է նա-Իւան Տուրքիները, ամբոխի ցուակցութիւնը անկեղծ էր, շարագոյծ բոթը տարածվում էր, ստուարանում էր ...:

Ժամանակները փոխուեցան: Հիմայ «Եւրոպական քաղաքակրթութիւնը» այլ ուղղութիւն է ստացել. եւրոպական մեծ մեծ պետութեանց քաղաքակրթութիւնը զգոյշ և խոհեմ է ընթանում: Մենք տեսնում ենք ամէն տեսակ դալթակցութիւն, ճնշումն աղգերի, հրեաների հալածանք, Տաճկաստանի կոտորածք, «Ելլոսնապետի» և «Ժողովրդեան» յարատեւ հակառակութիւն և կռիւ ... Եւրոպան զգոյշ է: Այս ամէնը կատարվում է կեղծ բարեպաշտութեամբ, սկզբունքների անունով, ամէնից աւելի Փարիզի տաճարներից, այնպէս որ «Եւրոպայի» քաղաքակրթութեան, աղմուկի և ցուցահանդիսի մէջ էլ չի լալում հայոց աղգի աղետոսով ճիշդ ...:

Իշխաններ, խեղճէր ձեր ախանջը անուշաբոյր բամբակով: Լուս կացէր կարող հրապարակաբանների, կարեւորութիւն մի տար այս մարտիկների որոտածմէի աղաղակին: Հանգիստ կացէր, մինչև որ վերջապէս մի օր «Եւրոպայի» համար անտանելի դառնայ այս բեռը: Եւ այդ օրն անշուշտ կը հասնի, երբ որ ամբոխը բաց կանէ իւր աչքը և կը տեսնէ, թէ «Եւրոպան» կարողանում է անտարբերութեամբ տանել այս ամբօթ, երբ որ ժողովրդեան սրտի մէջ կը մեռնի այն «հատար», «կործան» որ նա դաւանել է Տուրքիներէ կենդանութեան Ժամանակ:

Ամէնքը կը յեշեն, թէ ինչպէս հայերը խումբ խումբ որի մասնուեցան դիւտիան անդթութեամբ, որ անհնարին է նկարագրել թանաքով: Այս կոտորածի սկիզբը «Եւրոպայի» համար անշուշտ մնաց: Բայց 1880-ին, երբ որ սուլթանը քրդերից համիդիէ հեծելազոր կազմեց, աշխարհածանօթ եղան հեղինակաւոր պաշտպանութեամբ կատարում աննպատակ սպանութիւններ, առեւանգութիւն, անմարդկային դադանութիւն: 90—96 թուականներում հազարաւոր և բիւրաւոր անմեղներ և անդէններ սպանուեցան, ապահանուեցան, մարտերոտացան, անլուր զրկանքների հանդիպեցան սուլթանի հրամանով, որովհետեւ Եւրոպայի մեծ պետութիւնները անգործ նայում էին այդ տեսարանին:

Անգործ ... այո՛, մենք վկայ ենք, որ Եւրոպայի բանակցութիւնը Դրան հետ—կատարեալ խեղկատակութիւն և խայտառակութիւն էր: Բայց այս պատմութիւնը երկար է—կարգացէր Գողէի «Հայերի հալածանք», 1897-ին Նեո—Շատեւում տպագրածը և անգլիական «կապոյտ զբօսը»:

Ո՛ւր է այնքան Ժամանակ, որ բոլորը գրուի, ինչ որ Տաճկաց տէրութիւնը գործել է անգէն ժողովրդեան դէմ: Թէ ինչ դնով գնեցին մեծ պետութիւնները «աշխարհի խաղաղութիւնը», յիշատակներ միայն մի քանի բան: հազարից մէկը ...:

1890-ի կոտորածը անհաւատալի չափ ստացաւ. քրդերը կողոպտում, այրում, հունձը ոչնչաւցնում, առեւանգում, ընդգրկմացողին սպանում էին, անպաշտպանին դերի էին տանում: Իսկ աղերսագրերի դէմ սուլթանից հրաման էր դալիս, որ իւր «համիդիէ» մասին բողոքները լռեն:

93—94-ին սովի պատճառով տաւառութիւնը նորից սկսուեցաւ և հայերի բնակութեան տեղը բռնելու եկան քրդերն ու չեղբեղները սրով և մէջբով: Բուլանիսի և Մուշի սոսիակի աղետներով 10000 մարդ կողոպտուեցան: 94-ին Սասունը արեան մէջ ողորուեցաւ: Անգլիական հիւպատոսին յայտնի էր, որ այս բոլորը լարուել է սուլթանի օրոգայթով. խնդրում էին նորա մե-

Համառութիւնը, բայց նա չէր ուզում «բարեկամ տէրութեան» գործերում խառնուել: Միտինար դ-ը Գրին վիպայում է: Թէ սպանութիւնները կատարվում էին սպաների գիտութեամբ, սուլթանը շքանշան շնորհեց Զէկիի փաշային և յատուկ պաշտօնեայ ուղարկեց, որ արծաթի զէնքեր նուէր տանէ քրդերի 4 պետերին: (Այսպէս յիշատակվում են նաև Մուշի, Անդոկի, Ահհիտարի, Տրապիզոնի և այլն մինչև Աւրֆայի և Բերքիկի քրտարմանէի ամենութիւնները):

Անկարելի և անխել է թուել բոլոր անգթութիւնները: Գրիտոսի համար նահատակութեան թիւը հազարներ են: մարդկային նորագոյն պատմութեան մէջ այսպիսի անմեղների տանջանքները անխոր բաներ են: Խաղաղ մարդկերանց վերայ յոսկարծ անպատակում են: Փանտոկրատութեան և կրքի զոհ են դարձնում նոցա: լացողի աչքը հանում են: որ բերանը խցնի: լեզուն պոկում են: վիզը կտրում են: անարատ պան կանանց անպատկում են ... Ո՛հ, երանի այս ամէնը սուտ լինէր: բայց, ափսոս, կատարեալ իրողութիւն է: Եւրոպան այս բոլորը զիտէ: զիտէ որ ստոյգ ճամբարութիւն է: հեպատոսներն արձանագրել են անունները, ժամանակը, տեղը: Լսեցէք 96-ի հետեանքները: Եւրոպայի գիտութեամբ սպանուեցան, տանջուեցան, անշէջ կրակով այրուեցան ձեռքից զէնքը խլած 200,000 մեր եղբայրակիցները: Այս մարտիրոսութիւնը վաւերացուեցաւ գահակալող մեծ պետութիւնների կողմից իրանց անգործութեամբ: Եւրոպայի քաղաքակրթութեան, գիւնադիտութեան կամ քրիստոնէական քաղաքակրթութեան անմուռնջ վկայ են 400,000 այրի մնացածներ: 20,000 առևանգածներ: 120,000 որբեր:

Իսկ ի՞նչ է Տաճկահայաստանի վիճակն այժմ: 96-ից յետոյ: Կարճ պատասխանն այն է: Թէ կոտորածքը անարգել և անգութ կերպով շարունակուել է: Թէ մտադրած նպատակը շուտով գլխովին կը կատարուի: Աշխարհի երեսին ոչ մի տեղ այնպիսի խոտութիւն չի տիրում, ինչպէս որ Տաճկաստանում ենք տեսնում: Հարկաւ վարչութիւնը չի ուզեանայ վկայ ունենալ: Թէ այն տեղ ինչքէ է կատարվում: Եւրոպացին Տաճկաստան գնալ չի կարող. ամէն կողմից մուտքը դժուարացրել են: Մի ճանապարհորդ աւելի լաւ է համարում գնալ կողմնակի ուղղութեամբ, Պարսկաստանով, թէ և այդ ճանապարհն էլ անվտանգ է: Բայց ես փորձեցի, շարունակում է նոր: Եւրոպայից մանել, ծանոթացայ մեծ պաշտօնէի հետ: որ խոտացաւ տէրութեան հրաման ստանալ ինձ համար. սակայն վերևից այնչափ երկար սպասել են տալիս: որ ստիպուեցայ ձեռնառնայ

դառնալ հայրենիքս: Արդեօք ոչ մի հայ չի՞ մտել իւր հայրենիքը Եւրոպայից—ու. վասն զի ոչ որ հրաման չունի: ոչ որ ապահով չէ: բացի մասնիկից: Եթէ անցադրի մէջ հայի անուն կայ նշանակած: այդ պարտքը ոչ մտնել կարող է և ոչ գործս դալ սահմանից: հայրենիքը դորա համար փախուած գերեզման է:

Երեք ամիս տեւեց, մինչև որ մի ձեռագիր տետրակ (l'Arménie agonisante) Տիխիս հասաւ: Այս պիսի բոթ բերողը ինչ արիւթիւն պիտի ունենար, նա կենդանի կը տանջուէր: որովհետեւ հաւանական էր, որ պիտի բռնուի: Այդ ձեռագրի ֆրանսերէն թարգմանութիւնը, առանց հեղինակի անունի, մի սղը է ինքն իրան հանգստացնող և պնդացնող սրտից պարզ կերպով արտայայտած, մի անյայտ անձար վիճակի նկարագրութիւն է: որ ուղղուած է ռուսահայ եղբայրակիցներին և Արարատի ստորոտի Ս. Էջմիածնում բազմած Հայրապետին: Թարգմանող ֆրանսիացին: Հարմտանը, յուսով է: Թէ կը շարժէ Եւրոպայի մարդասիրութիւնը, մեծ պետութիւններին ուղղելով այս հասցեով. „Aux chefs d'Etat, chancelliers, ambassadeurs et ministres des six grandes puissances“.

Բայց միթէ այս Զոյ մարդիկ ժամանակ կը գտնեն թուղթն ուսումնասիրելու կամ իրանց տէրութիւնների աղղու միջամտութիւնը գլուխ բերելու համար: Եթէ չիշենք: Թէ ինչ խեղկատակութիւններ են կատարուել յունաց պատերազմի և Կրէտէի պաշարման ժամանակ—մենք պէտք է յուսահատուինք այս «արդարադատութեան հրաւերի» մասին ևս:

Իմ կարծիքով հրաւերն ուրիշ կողմ պէտք է դարձնել. միայն մի ճանապարհ կայ, միայն մի յոյս ունինք յաջողութեան, եթէ կարողանանք այս թշուառների իրաւացի բողոքը հասցնել Եւրոպայի քաղաքակրթ ժողովուրդներին: որպէս զի նորա քնից զարթնեն և ճամբարութեան հասու լինին: Այս պէտք է կատարուի և կարող է կատարել Եւրոպայի մամուլը: ոչ թէ կաշառուած մամուլը, որ իշխանների երգն է երգում: այլ ազատ և անկախ մամուլը: Այս է հոգեւորի հաւաքանքը, որ մեռանող քրիստոնեայ ազգը ուղղում է եօթներորդ պետութեան:

Ասացի թէ գրութիւնը չի փոխուել: Եւրոպան առանց խղճալու իւր ուշադրութիւնը դարձրել է ուրիշ կողմ: Մամուլը գիտակցաբար մոլորեցնում է ժողովրդեան. մեծ թերթերը, մանաւանդ Փարիզիները, Տաճկաստանից կաշառք են ստանում, որ արևմտահայերէն մասին լռեն կամ տան: Գործը հակառակ իրանց համոզման խեղճիւրելով, նորա տարածում են այն դադարիւրը, թէ կոտորածքը Հայերի անպատմութեան հետեանք է: Այս երկրում (Հայաստանում) սո-

վորական ընթացքը չը պէտք է փոխուի, կոտորածը պէտք է շարունակուի մինչև վերջին շունչը մեր դարը պէտք է փակուի այս ամօթով: Այն քեզ, քաղաքակիրթ աշխարհ:

(Ապա թուում նորագոյն քառամենի դէպքերը):

Տաճկաց տէրութիւնն աշխատում է ահ ձգել այն դադթական հայերի սրտի մէջ, որոնք Ռուսաստանում երազում են դառնալ իրենց նախկին հայրենիքը:—Ոչ թէ հարկը հազար, այլ միլիոն է սպանուել և մարտիրոսացել, և այս բոլորը կատարուել է և կատարվում է Եւրոպայի աչքի առաջ: Շատերն իբրև միեմարանք ասում են, թէ հալածանքը քրիստոնէութեան դէմ է: Բայց այս ոխալ է. հալածվում է ոչ թէ քրիստոնէան, այլ հայն: Ասորոյ աշխատում են հայերի տեղ մուսուլմաններ ընտելեցնել:

Անտեղեակ Եւրոպան կարծում է, թէ Հայաստանը ապստամբել է և իւր խռովութեան պատճառով պատժվում է: Այս էլ ազդեղ ստութիւն է. Բոլոր ականաւանները վիայում են, որ հայերը լաւ առարկնութիւններ ունին, մարմնով և հոգով ազնիւ ազդ են. հայն ազդատէր է սիրում է, ընտանիք, հայրենիք, կրօն: Վերջովը խնայ ոգևորուած գոյել է այդ ազգի բարձր հոգեկան բարեմասնութիւնները, որ երեւում են զարգացման ամենայն ճիւղերում, Խայտառակութիւն է, որ այսպէս ազգը անյոյս ինքնապաշտպանութեան զխնջու հարկադրվում է. այս քմբոստութիւն չէր, այլ լոկ պաշտպանութիւն անձի. և մեղաւորը միշտ տաճիկն է եղել: Սուլթանը երկիւղի մէջ է. հասկանալի է, որ նա օր ու գիշեր պէտք է դողայ, որովհետև գիտէ իւր նախորդների վիճակը, գիտէ և իւր արածներն իւր երկրում... Իսկ ուր է աշխարհում այն բարձր, ուր որ այդ գլուխը կարողանար հանգիստ դանել...:

Իւսն Տուրքենե, լաւ է որ գերեզման ես մտել առաջ, քան Եւրոպայի մասին տաճած հաւատդ կը ստուէր: Եթէ այժմ ապրէիր քո սիրած Փարիզում, միթէ դարձեալ նոյն հաւատը կունենայիր և ազնիւ գլուխդ կը խոնարհէիր ցուցամու աշխարհահանդիսի առաջ, Գու կը լսէիր այս կոտորածի աղաղակը, քո առջև աներեւոյթ թաթով կը գրուէր Մանէ, Մանէ, Թեկեզ ու Փարսին: և ոչ օր չէր կարողանայ մեկնել դրի զօրութիւնը. դու կը տեսնէիր կանգնած տաճարներ—թղթից շինած, որ այսօր կառուցանվում են, վաղը ծխի մէջ են, և ամէնքը փախչում են այդ տաճարներից... դու կը հաստատէիր արիւն, իշխանների ոտի տակ արիւն, ամէն տեղ արիւն:—

Եթէ կարողանանք դէթ մի օր զարթեցնել Եւրոպայի ժողովրդեան, որ իմանայ, թէ ինչ և

ինչպէ՞ս է կատարուել, այն ժամանակ այս մեծ գայթակղութիւնը կը ծնանի դայրոյթ, առեւտրութիւն, այն ժամանակ վրէժինդեր հրեղէն սուրը կը շողշողայ և շատ դոհեր ոտքի տակ կը դնէ:

Բայց մենք, որ առեւտրութիւն չենք սիրում, որ չենք հաւատում թէ լաւ կարգը շարութեան վերայ է հաստատվում, լոկ միայն ուղում ենք ազգերի ականջին դռնել. «բաց արէ՛ք ձեր աչքերը և նայեցէ՛ք ձեր շուրջը»: պահանջել ապաշխարութիւն, զղջումն, որ ակամայ մասնակից դառանք այս ամօթոյ խայտառակութեան մէջ, պահանջել օգնութիւն, անպայման և անկեղծ օգնութիւն Հայաստանի կենդանի մնացած մեր եղբայրների համար: օգնութիւն ամենայն դնով, որպէս զի ինչ սխալ որ երէկ գործել է քաղաքակիրթ Եւրոպան, այս օր պարտք համարէ լինուի ուղղել: Ամէն:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Հ Ի Ն Ց Ա Ի.

Այս վերնագիրն ունի մի փոքրիկ զարդոյկ, որի մէջ ամփոփել եւ մօտ օրերս լոյս է ընծայել իւր «Տրապարակախօսական խոհերը» պ. Լ. Սարգսեան: Մենք առանձնապէս շնորհապարտ ենք պ. Սարգսեանին, որ այդպէս թանգ է գնահատում իւր «խոհերը» եւ թոյլ չի տալիս օրաթերթի վաղանցուկ էջերի մէջ փայլին մի քանի ժամ եւ մոռացուին անհետ, այլ ներկայացնելով ընթերցող հասարակութեան երկրորդ անգամ աւելի երկարակեաց պատեանի մէջ եւ իբրև մի կապակցեալ ահողջութիւն՝ առիթ է ընծայում նոր ի նորոյ զմայելու, նորանոր մեծ մտքեր քաղելու նոցա իմաստութեան բովից: Մենք շնորհապարտ ենք ոչ միայն նորա համար, որ պատմառ ունինք աւելի քան ուրիշ որ հետաքրքրուելու պ. Սարգսեանի վերականգնեցրած «Հին ցաւ»ով, այլև որ նորա «խոհեր»-ի մէջ, աւելի զուցէ քանի ուրիշ տեղ, կենդանի կերպով պատկերացած ենք զրոնում մի ուրիշ հնաշաբէ ցաւ, ոչ պակաս ու-